Ավետիք Իսահակյան

Կովկասի հայոց հրատարակչական ընկերության մեծարգո մասնաժողովին, 1912թ . , մայիսի 8

Ստացա ապրիլի 15-ի թվակիր Ձեր գրությունը, որով Մասնաժողովդ հանձնարարում է ինձ թարգմանել Կ. Համսունի «Պանը», տպագրական թերթին 26 ռուբլի վարձատրությամբ. Երեկ ստացա «Պանի» գերմաներենը – Maria von Barch-ի թարգմանությամբ, որը «Պանի» միակ իրավատեր թարգմանիչն է Գերմանիայում, հրատարակչ. Albert Zaugen, Munchen թերևս հարկավոր գա Ձեզ այս՝ համեմատելու համար:
Շուտով կձեռնարկեմ թարգմանությունը, հույս ունեմ, որ նկատի կունենաք ինձ հաջորդ թարգմանական ձեռնարկների մեջ:

Ընդունեցեք հարգանքներս՝
Ավ. Իսահակյան